ՄԵԾԱՊԵՏԱԿԱՆ ՇՈՎԻՆԻԶՄ

Այո՛, մեծապետական շովինիզմ. ուրիշ կերպ հնարավոր չէ բնութագրել Ադրբեջանական ԽՍՀ-ի ղեկավարության քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հայ բնակչության նկատմամբ: Քսանական թվականներին խորամանկության, խաբեության, «ադրբեջանական գործոնով» աճաբեկելու ստոր մեթոդներով բռնակցելով մարզը, 70 տարի այն պահվում էր հոգևոր ու տնտեսական ճնշման տակ: Եվ երբ համբերության բաժակը լցվեց, Արցախի հայ ժողովուրդը, երկրում հռչակված «վերակառուցում, հրապարակայնություն և բացախոսություն» հիմնարար սկզբունքների ոգուն համապատասխան, ոտքի կանգնեց ու սեփական նախաձեռնությամբ փորձ արեց վճռելու իր ճակատագիրը: Այդ համարձակ քայլը, որ միջազգային իրավունքի տեսակետից ամենաօրինականն է ու ամենամարդկայինը, տարօրինակ իրադրանցում առաջացրեց ինչպես Ադրբեջանի, այնպես էլ ԽՍՀՄ ղեկավար շրջաններում: Անմիջապես գործի դրվեց, այսպես ասած, «ադրբեջանական գործոնը»՝ հանրապետության տարածքում հայերի ջարդեր և մասսայական արտաքսում, մարզի և Հայաստանի տնտեսական շրջափակում: Իսկ հիմա էլ երկրի գերագույն մարմնում է ձգձգվում մայր Հայաստանին Արցախ աշխարհի միավորման հարցը:

Քաջալերվելով իշխանությունների անքող աջակցությունից ու հովանավորչական քաղաքականությունից, Ադրբեջանի ղեկավար մարմինները ավելի հեռուն գնացին: Օրերս նրանք ազգային սեփականություն հռչակեցին հանրապետության ընդերքի ու տարածքի բոլոր արժեքները, այդ թվում՝ նավթը, նավատորմը, երկաթուղիները ու ավտոմոբիլային ճանապարհները: Մի՞թե պարզ չէ, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում, խնդրելով հինգ օր ժամանակ, Ադրբեջանի ղեկավարությունն ամենևին էլ նպատակ չուներ ընպաստելու երկու հարևան հանրապետությունների միջև վեճի կարգավորմանը: Այդ շաբաթը նրան պետք էր Հայաստանի և ԼՂԻՄ-ի հանդեպ նոր չարագուշակ քայլեր ձեռնարկելու համար: Նշանակում է՝ մեր հանրապետության և Արցախի շրջափակման օղակն ավելի է սեղմվելու, նոր խոչընդոտներ են ստեղծվելու Ղարաբաղյան շարժման ազնիվ նպատակների իրականացման ճանապարհին:

Այն, ինչ ձեռնարկում է ադրբեջանական կողմը, մեզ համար հասկանալի է. դա բխում է նրանց հայատյացությունից, քրիստոնյա փոքր ազգին մուսուլմանական ճնշման տակ պահելու և, եթե հնարավոր է, ոչնչացնելու անմարդկային հոգեբանությունից, մեծապետական շովինիզմի անքող քաղաքականությունից: Սակայն, որքան էլ ցավալի է, ամենևին էլ հասկանալի չէ մեր երկրի բարձրագույն ղեկավարության դիրքը, որը հակատում է ազգերի ազատ ինքնորոշման լենինյան սկզբունքներին, մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային հանրության փաստաթղթերին: Ակամա զարմանում ես, խորհրդային կարգերում մի՞թե հանդուրժելի են այդ չարագուշակ մեթոդները:

Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Պատերազմի և աշխատանքի վետերան

ՀԻՄԱ ԷԼ... «ԵՐԻՏԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵ՞ՐԸ»

Երիտթուրքերը հանդես եկան ազատության անունից և... անկշտում բորենու պես լափեցին հայ ժողովրդի ազատության վերջին ծվենը: Երիտթուրքերը հանդես եկան միջազգային կոմունիստական շարժման անունից և սկսեցին մահ ու սարսափ, նախճիր ու եղեռն սփռել ծպտված աստղակիր գլխակալներով, կոմունիստական կարգախոսներով...

Հիմա էլ... «երիտադրբեջանցիները». ահա հանդես են գալիս ինտերնացիոնալիզմի անունից և վերջին ճիգով փորձում են պահել Արցախ աշխարհը: Նրանց համար, ինչպես իրենց «օրհնված» նախորդները, ոչ քաղաքակիրթ աշխարհ գոյություն ունի և ոչ էլ քաղաքակրթություն. նրանք իրենց օրենքները վերցնում են ջունգլիներից՝ իշխիր, քանի ուժեղ ես, թոցրու՝ քանի կարող ես:

Հիմա էլ... «երիտադրբեջանցիները». ահա հանդես են գալիս վերակառուցման անունից և նոր օրերի լույսով վերակառուցում՝ Հայաստանը հայաթափ անելու իրենց ախորժակը, որ այնպես անհագուրդ ծավալվեց Նախիջևանում:

Մի հարցնենք ադրբեջանական մեջլիսին՝ այդ ո՞ր իրավունքով քեզ իրավունք ես վերապահում մի ամբողջ ժողովրդի պատկառելի հատվածին՝ Արցախի հայությանը, շղթայել քեզ, բռնադատել նրա իրավունքները, այդ ո՞ր իրավունքով, ինքդ քեզ ինքնորոշման իրավունք ես վերապահում և ստորագույն ինքնավարությամբ ձեռք բարձրացնում ինքնորոշման արցախյան իրավունքի, ուրեմն և՝ մարդկության մեծագույն նվաճման՝ ինքնորոշման իրավունքի վրա:

Վերջապես, չի կարելի ինքնորոշվել, եթե չես ողջունում ինքնորոշման ամեն մի քայլ...

Կյանքը ցույց է տվել, որ, այո, ամուր, շատ ամուր են ազգայնամոլական ամրոցները, բայց ոչ՝ անխորտակելի...

Մարդկանց աշխարհը դա պետք է, որ հասկանա...

Նորիկ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Լրագրող

ԲԱՐԵԿԱՄԻՆ ՃԱՆԱՉՈՒՄ ԵՆ ՆԵՂ ՕՐԸ

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989 թվականի հոկտեմբերի 3-ի ընդունած որոշումը հիասթափություն առաջացրեց իմ մեջ: Անորոշ, անհասցե մի որոշում: Կարդում ու զարմանում ես, թե մեր պառլամենտը ինչպիսի հոգատարություն է ցուցաբերում մեր հարևան հանրապետության չափը կորցրած ահաբեկիչներին, որոնք ոտնահարելով ԽՍՀՄ սահմանադրական բոլոր օրենքներն ու միջազգային հարաբերությունների չափանիշները, շրջափակել են մեր հանրապետությունը, Լեռնային Ղարաբաղը, ստեղծել դրամատիկ վիճակ, մեր ժողովրդին զրկել պարենից, վառելիքից, մյուս բոլոր կենսական միջոցներից, ձախողման ենթարկել աղետի գոտու շինարարությունը: Եվ դա արվում է երկրի ժողովրդի աչքի առջև, աշխարհի առջև: Ըստ երևույթին, իմանալով, որ խորհրդային պառլամենտում, երկրի ղեկավարությունում իրենց հուսալի հովանավորողները ունեն: Ահա ինչու գերագույն իշխանության որոշման մեջ շրջանցելով բոլոր տեսակի աղաղակող փաստերը, «քնքուշ» հայտարարություններ են արձակվել. «Գերագույն խորհուրդը դատապարտում է հակաօրինական բռնի մեթոդների ու գործողությունների կիրառումը...»:

Ո՞ւմ է ուղղված այս անորոշ կոչը: Մեր ժողովուրդը 70 տարի շարունակ հոգնել է նման հայտարարություններից: Ո՞վ է հակաօրինական բռնի մեթոդների դիմողը, ոչ ոք հրամանագրից չի իմանում: Գերագույն խորհրդի որոշման մեջ նույնիսկ չի նշվում առկա աղաղակող փաստերից որևէ մեկը, որպեսզի հակաօրինական մեթոդների վարպետ սանձարձակները «չնեղանան»:

Ինչ փույթ, թե Հայաստանի աղետի գոտում 700 հազար փորձության ենթարկված մարդիկ մնացել են անօթևան, ինչ փույթ, թե Ադրբեջանի առանձին ղեկավարների հովանավորությամբ հարևանի ընկատմամբ ատելությամբ կուրացած սանձարձակները ուզում են մի ամբողջ ժողովրդի զրկել գոյատևման իրավունքից: Ներկայիս բլոկադան մեր կարծիքով, պլանավորված քաղաքական ձեռնարկումների շղթայի մի օղակն է, որոնց նպատակն է ուժի ճնշման միջոցով ձախողել Լեռնային Ղարաբաղի հարցի քաղաքական լուծումը:

Եվ վերջապես, կարելի՞ է երկրի ժողովրդից այդքան ժամանակ թաքցնել, տեղյակ չընպահել հանրապետություններից մեկի ժողովրդի ընկատմամբ կիրառվող ագրեսիան: Մտածում ես ու զայրանում. ի՞նչն է պատճառը, որ կենտրոնական հեռուստատեսությունը, կենտրոնական մամուլի խմբագրությունների ղեկավարները, լրագրողները պապանձվել, չեն ընկատում մեր ռեգիոնում տեղի ունեցող այս վայրենի արարքները, այդ մասին տեղյակ չեն պահում երկրի լայն հասարակայնությանը:

Այդպես վարվեցին ու քաղաքական գնահատական չտվեցին սումգայիթյան ցեղասպանությանը, որից էլ ոգևորվեցին ատելությունից կուրացած մեր հարևանները ու դիմում են ավազակային նոր քայլերի: Երկրի ամենահեղինակավոր մարմնի կողմից Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի մարզի շրջափակման իրավիճակը լուծության մատնելը, հակամարդկային այդ վայրագություններին քաղաքական գնահատական չտալը նշանակում է խրախուսել նրանց նոր ագրեսիայի, նշանակում է երկիրն ու ժողովուրդների բարեկամություն կոչվող անխախտ դաշինքը կանգնեցնել կործանման եզրին:

Իմ ժողովուրդը միշտ հավատացել ու հույսեր է կապել հյուսիսի մեր հարևանի, մեր երկրի մյուս ազնիվ հարևանների հետ: Ինչո՞ւ եղբայրական հանրապետությունները իրենց ձայնը չեն բարձրացնում և արժանի հակահարված չեն տալիս մեր ժողովրդի նկատմամբ ատելությամբ լցված վայրագներին: Չէ՞ որ բարեկամին նեղ օրն են ճանաչում:

Մենք մեծ հույսեր ենք կապել երկրի վերակառուցման հետ, իսկ հիմա՞:

Երկրի գերագույն իշխանությունը պետք է վերականգնի ժողովրդի հավատը, այդ են պահանջում վերակառուցման շահերը:

Արծ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ